ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

1991 թվականին Մատենադարանին հանձնվեց ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի անձնական արխիվը:

Կարգավորման աշխատանքների ընթացքում հարյուրավոր նամակների միջից հայտնաբերվեցին նաև նշանավոր հոգևորական, մեծ հայագետ Գարեգին Հովսեփյանի անտիպ նամակները՝ հասցեագրված Ստ. Մալխասյանին:

Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում եղած նամակներից չորսը: Դրանք վերաբերում են Քրիստոնեության ընդունման 1600 և Գրերի գյուտի 1500-ամյակների նշման առթիվ կատարվելիք աշխատանքներին:

«Մեծ տոնի հիշատակին» /1600-ամյակի առթիվ/ մեծ նախաձեռնություն հանդես բերեցին նեմարանի սաները: Գ. Հովսեփյանի գլխավորությամբ ձեռնարկվեց հոբելյանին նվիրված գիտական ժողովածուի հրատարակման գործը, որին մասնակցեցին նշանավոր հայագետներ Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Գ. Տեր-Մկրտչյանը, Ս. Կանայանը և ուրիշներ:

«Իմ ցանկությունն է, որքան կարելի է որակությամբ և քանակությամբ հարուստ մի ժողովածու հրատարակել, որ իւր արտաքին շքեղությամբ և ներքին բովանդակությամբ տոնի մեծությանն պատշաճ լինի», գրում է Գարեգին Հովսեփյանը Ստ. Մալխասյանին և խնդրում նրան բանասիրական կամ լեզվաբանական մի հոդվածով կամ ուսումնասիրությամբ իր մասնակցությունը բերել հրատարակվելիք ժողովածուին:

Գրերի գյուտի 1500-ամյակի առթիվ, համաձայն Կաթողիկոսի կոնդակի, կազմվեց խմբագրական մի հանձնախումբ, որը պիտի ճոնական հրատարակությամբ լույս ընծայեր «Պատմագիրք Հայոց» հայ դասական պատմագրության մատենաշարը:

Խմբագրական հանձնաժողովի նախագահ Ստ. Մալխասյանը դիմում է Գ. Հովսեփյանին՝ առաջարկելով նրան աշխատակցել հրատարակվելիք մատենաշարի աշխատանքներին: Ողջունելով «ձեռնարկությանն առիթն ու բարի նպատակը», Գ. Հովսեփյանը տալիս է իր համաձայնությունը՝ հայտնելով, որ թարգմանության համար կընտրի Սեբեոսին:

Ձեռնարկված «Պատմագիրք Հայոց» մատենաշարի հրատարակման գործը դժբախտաբար կիսատ մնաց: Լույս տեսան միայն երեք հատոր /1904 թ.՝ Ղազար Փարպեցին՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, 1909 թ.՝ Ագաթանգեղոսը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, և 1913 թ.՝ Մ. Խորենացին՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի աշխատասիրությամբ/:

ԳՈՀԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ

25 նոյեմբ. 1900 թ.
Ս. Էջմիածին

Յարգելի պարոն
Ս. Մալխասեան,

Անշուշտ կ'յիշէք, որ իմ Տփխիսում եղած ժամանակ առիթ ունեցայ Ձեզ հետ խօսելու այն գիտական ժողովածուի մասին, որ նեմարանի սաներս մտադիր էին հրատարակելու ի յիշատակ նեմարանի 25 ամեակի: Ձեր մասնակցութիւնն ևս խնդրեցի և Դուք սիրով խոստացաք Ներսիսեան դպրոցի յորելեանի համար պատրաստած գիտական ճառը յարմարեցնել մեր ժողովածուին: Արդ այսու խնդրում եմ, եթէ պատրաստ է Ձեր աշխատութիւնը, հանէիք ուղարկել ինձ, որպէսզի բոլոր գրուբիւնները կարգի բերելուց յետոյ՝ ցենզորական վարչութեան ուղարկեմ տպագրելու իրաւունք ստանալու:

Հիւանդութեանս պատճառով գործն ուշացաւ, բայց «լաւ է ուշ, քան երբէք»: Յոյս ունիմ, որ փոքր ինչ հայագիտութեան համար արժէք ունեցող ժողովածու կ'ունենանք:

Յարգանօք ողջունում է
Ձեր խ. Գարեգին վրդ. Յովսէփեան

Յ. Գ. Եթէ Ձեր աշխատութիւնը դեռևս բոլորովին պատրաստ չէ, հաճեցէք խնդրեմ երկտողով յայտնել, թէ ե՞րբ կարող կ'լինիք ուղարկել:

Նոյն

***

Յարգելի պ. Մալխասեան,

Ձեր պատուական նամակն ստացայ. բայց իսկոյն չ'պատասխանեցի, որովհետև այնքան շտապողական չէր: Ձեր ընտրած ծրագիրն ինքնըստինքեան հետաքրքրական է, ուրախութեամբ կ'հիւրընկալուի Ձեր յօդուածը, որքան էլ երկար լինի: Յոյս ունիմ, որ այժմ արդէն սկսած կ'լինիք, ինչպէս յայտնել էիք Ձեր նամակի մէջ:

Կարիք չկայ, որ յօդուածը Դուք ներկայացնէք ցենզուրին: Այստեղ ամբողջը միասին կ'ուղարկեմ:

Յարգանօք ողջունում է
Ձեր խ. Գարեգին վրդ. Յովսէփեան

21 յուն. 1901 թ.
Ս. Էջմիածին

***

Ցարգելի պ. Մալխասեան,

Երևի Դուք շատ ուրախացաք, որ ինձ ֆշեցին Տփխիսից, որովհետև մեր գրական երեկոյթի համար դասախօսութիւն պատրաստելուց և կարդալուց ազատուեցաք: Սակայն սխալուած էք, հեշտ կերպով Ձեզ հանգիստ չեմ թողնի, մի դասախօսութիւն ասեմ, թե շարադրութիւն պարտական էք ինձ և ահա սոյն երկտողով Ձեր դուռն եմ բախում պարտէս հատուցանել տալու:

Անշուշտ չէք մոռացել մեր ժողովածուի խնդիրը. այժմ յարութիւն է առել այն աւելի ընդարձակ ծրագրով: Շուտով լրանում է Ս. Էջմիածնի 1600 ամեակը. Մայր Աթոռի ճեմարանի սաները ծրագրուած ժողովածուն նուէր պիտի բերեն մեծ տօնի յիշատակին: Այսպիսով նախկին շարժառիթը միանում է նորկայ տօնի հետ: Ահա այս նպատակի համար եմ Ձեզ դիմում և խնդրում բանասիրական կամ լեզուաբանական մի յօդուածով կամ ուսումնասիրութեամբ Ձեր աջակցութիւնը: Տաւալը կարող է մէկից մինչև երեք տպագրական թերթ լինել: Իմ ցանկութիւնն է, որքան կարելի է, որակութեամբ և քանակութեամբ հարուստ մի ժողովածու հրատարակել, որ իւր արտաքին շքեղութեամբ և ներքին բովանդակութեամբ տօնի մեծութեան պատշաճ լինի: Արդէն բաւականաչափ անձինք խոստացել են իրենց աշխատակցութիւնը՝ Կարապետ, Կոմիտաս և Ցուսիկ վարդապետները, Գալուստ Տ. Մկրտչեան, Կ. Կոստանեան, Ս. Տիգրանեան, Մանանդեան, Մ. Աբեղեան, Ս. Կանայեան, Անառեան, գրուած են և ուրիշ կարող անձանց: Ցոյս ունիմ, որ հայագիտութեան բոլոր ճիւղերից բաժին կ'ունենանք. հնագիտական և ազգագրական յօդուածները պատկերազարդ կլինեն: Կոմիտաս վարդապետը երաժշտական մի յօդուած տալուց զատ՝ ժողովրդական երգեր և լէլէներ էլ կտայ ձայնագրուած: Մի խօսքով նշանները այնպէս են, որ յոյս ունիմ, թէ արժէք ունեցող բան դուրս գայ:

Ձեր մատենագրութեան դասերի ժամանակ գործածելու համար շուտով հնագիտական մի ալբոմ կ'ուղարկեմ 20 պատկերներով, որոնք հայոց գրի փոփոխութիւնների մասին մեկին գաղափար են տալիս: Իւրաքանչիւր պատկերի տակ գրուած կ'լինի գրութեան բուականը, գրչի անունը և այն պարագաները, որոնք անհրաժեշտ են: Կարծեմ օգտակար կ'լինի այս գործը Ներսիսեան դպրանոցի համար. հնագրութեան պատմութիւնը ապագայում եմ թողնում, երբ ձեռքիս տակ եղած գործերը կ'վերջացնեմ:

Ցարգանօք Ձեր խ. աղօթարար
Գարեգին վրդ. Ցովսէփեան

28 սեպտ. 1902 թ.
Ճեմարանի տօնին
Ս. Էջմիածին

Ցարգելի պարոն Մալխասեան.

Հոկտ/եմբեր/ 5-ին գրած Ձեր պատուական նամակն ստացայ. շնորհակալ եմ նախ Ձեր բարեկամական խօսքերի և ապա այն պատուի համար, որ անում էք ինձ՝ առաջարկելով աշխատակցել տառերի գիւտի 1500 ամեակի առթիւ Ձեր հրատարակելիք գործին, որին ի սրտէ յաջողութիւն եմ ցանկանում:

Շատ գովելի է Ձեր մտադրութիւնը. մեր նախնեաց մատենագրութիւնն ու պատմութիւնը այլ ևս գրաբար լեզուով մատչելի չէ նոյն իսկ կրթուած դասակարգին, իսկ ներկայ սերունդը հետաքրքրել անցեալով մեր գոյութեան պահպանութեան էական պայմաններից մէկն է: Ի նկատի ունենալով Ձեր ձեռնարկութեան առիթն ու բարի նպատակը սիրով կ'կամենայի աջակից լինել, ենթադրելով, որ ամենաքիչը 1 1/2 տարի ժամանակ կ'տաք: Այս վերջին հանգամանքն ինձ համար կարևոր նշանակութիւն ունի, որովհետև մինչև միւս սեպտեմբեր հաւանօրէն լի ու լի աշխատանք կ'ունենամ և անկարող կ'լինիմ ուրիշ գործի ձեռ տալ: Համաձայնութեան դէպքում կ'կամենայի Սեբէոսն ընտրել թարգմանութեան համար. այդ հեղինակն ինձ հետաքրքրում է և ուրիշ տեսակէտով, այն ժամանակը, որ պէտք է գործադրեմ ժամանակագրութիւնն ու պատմական նկարագրութիւնն ստուգելու, օգտակար կ'լինէր և ապագայի համար ծրագրուած աշխատութեան համար: Աշխատութեան համար նշանակուելիք վարձատրութիւնն ինձ համար երկրորդական է. եթէ դրամի սղութիւն կ'ունենամ, կարող էք իմ վարձատրութեան մասին չ'մտածել, երևի այն ժամանակ ևս մի կտոր հաց կ'ունենամ ուտելու իբրև վարդապետ, ինչպէս և այժմ, աւելի ցանկալին ծրագրուած բարի ձեռնարկութեան յաջողութիւնն է:

Մինչև այստեղ, երևի, գոհութեամբ կ'կարդամ նամակս և կ'մտածէք. «Լաւ էր, հեշտութեամբ ստացանք Գ. Վ. – ի համաձայնութիւնը»: Սակայն ... սպասեցէք: Առանց կաշառքի կատարուած գործերը չեն գնահատւում մեր երկրում, իսկ ես կ'կամենայի, որ իմ համաձայնութիւնը շատ թանգ գնահատուէր: Թախանձագին խնդրելով՝ մի մեծ նուէր կ'կամենայի ստանալ Ձեզանից, և այդ նուէրը կ'լինէր Ձեր աշխատակցութիւնը մեր ժողովածուին, եթէ ոչ մեծ ուսումնասիրութեամբ, գոնէ լեզուաբանական կամ բանասիրական մի յօդուածով: Հաշտուել չեմ կարող այն մտքի հետ, որ Դուք մասնակից չ'լինեք նեմարանականների հրատարակութեան: Ցուսով եմ, որքան էլ ծանրաբեռնուած լինիք, մի հնար կ'գտնէք խնդիրքս կատարելու:

Սիրալիր ողջոյններով և յարգանօք

Ձեր խ/ոնարհ/ աղօթարար

Գարեգին վարդ. Յովսէփեան

10 հոկտ/եմբեր/ 1902 թ.

Ս. Էջմիածին

Ց. Գ. Այս շաբաթ չկարողացայ հնագրական ալբոմը պատրաստել Ն/երսիսեան/ դպրոց ուղարկելու համար. յուսամ միւս շաբաթ կարող կ'լինեմ: Այդ գործն ուսումնասիրութեամբ հանդերձ պէտք է նուիրուի տառերի գիւտի յիշատակին:

Նոյն